

- 20 Սա ըստացեալ էր ի մերոց
Ապրանազեան պերճ ծննդոց
Զոմանս համբախս սիրօղս գրոց
Զորս քաջ մարդէր յիւր իսկ գպրոց :
- 21 Յակն արկանեւն Սարգսի զորոց
Յառաջանաւն ի դասս գիտնոց,
Փայլէր յինքեան իբր ի հնոց
Իմաստութեան սուրբ սիրոյն բոց :
- 22 Վասն այն յաւէտ հանէր յոգւոց
Յուսումնատենչ սրտին խորոց
Առ գոլ ինքն իսկ ի շար թուոց
Առ սոս վեհին հրահանգելոց :
- 23 Իսկ հայրն առ այս կանգնէր խորոց ,
Զի եզակն էր յարու որդւոց ,
Անակնկալ հարուածոյս խոց
Մաշէր Սարգսի զաղիս եւ ծոց :
- 24 Ապա տեսեալ նորուն ծնողաց ,
Թէ չէր հնար հանել ի բաց
Յողւոյ նորա եւ ի մտաց
Զայն քաջ խորհուրդ ճահ գովանաց :
- 25 Նաեւ ազդեալ իբր ի բարձանց՝
Զընդդիմանալ նորին կամաց ,
Ի 'երկնից կոչման տնօրինմանց ,
Յուցին յայն փոյթ զճաճոյս իւրեանց :
- 26 Յայնժամ Սարգիս սիրօղ բարեաց ,
Ոչ հետեւող չար ընկերաց ,
Եւ պատանի յոյժ մաքրակեաց ,
Էր հասակաւ քսան ամաց :